

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ
ՀՈՎՀ. ՇԻՐԱԶԻ ՍՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ՍՆՆՔՆԵՐԻՄ ՄՆԼՔՈՆՅԱՆ

Գեղարվեստական խոսքի ուսումնասիրության նպատակը դրա ինքնատիպության, անհատականության բացահայտումն է: Գրողի լեզվի անհատականությունը պայմանավորող իրողությունների մեջ կարևոր դեր ունեն նորաբանությունները: Վերջիններս գեղարվեստական խոսքում, իհարկե, բաղմանադրան դրսևորումներ ունեն, որոնցից մեկը հեղինակի կողմից ստեղծված նոր բառերի օգտագործումն է:

Գրեթե բոլոր գրողներն ու բանաստեղծներն էլ կերտում են նոր բառեր՝ մեկը շատ, մյուսը քիչ: Հովհ. Շիրազն այս հարցում բացառիկ տեղ է զբաղեցնում մեր հին ու նոր քնարերգության մեջ: Մեր հաշվումներով նա ստեղծել է ավելի քան 750 բառ: Սա հազվագեյտ երևույթ է: Նարեկացուց հետո, մինչ այսօր, մեր բանաստեղծներից ոչ մեկն այդքան նոր բառ չի ստեղծել: Բայց, չնայած դրան, Շիրազի ստեղծած նոր բառերը դեռևս ուսումնասիրության առարկա չեն դարձել, ինչպես նաև կազմված չէ դրանց ցանկը: Այս վերջին հանգամանքի պատճառով է, որ մեր արդի գրական լեզվի ոչ մի բառարանում չիրազյան նորաբանությունները լրիվ տեղ չեն գտել:

Մեր նպատակն է Շիրազի կերտած բոլոր բառերի ուսումնասիրության հիման վրա հնարավորին չափ բացահայտել դրանց, գեղարվեստական, ոճական արժեքը:

Նորակերտ բառերը երկու տեսակ են լինում: Մի խմբում դասվում են նրանք, որոնք կյանքի են կոչվում գիտության, տեխնիկայի, հասարակական-քաղաքական կյանքի զարգացման հետևանքով: Դրանք կյանքում, կենցաղում հանդես եկած նոր առարկաների ու հասկացությունների անվանումներ են, որոնք ստեղծվում են ժամանակակից գրական լեզվի բառապաշարի պակասը լրացնելու համար: Արդի հայերենում այդպիսի բառեր են՝ հեռուստացույց, գազօջախ, մանրահատակ և այլն: Այսպիսի բառերն ընդհանրական արժեք ու գործածություն ունեն, և դրանց ստեղծումը չի կապվում որևէ անհատի անվան հետ:

Նորաբանությունների երկրորդ տեսակը անհատական նորաբանություններն են, որոնք գերազանցապես բնորոշ են գեղարվեստական լեզվին և ստեղծվում են գրողների ու հատկապես բանաստեղծների կողմից: Անվանողական դերով հանդես գալով հանդերձ՝ դրանք օժտված են գեղարվեստական, արտահայտչական արժեքով:

Անհատական նորաբանությունների գնահատման հիմնական չափանիշը համապատասխան խոսքային միջավայրում դրանց ունեցած արտահայտչական արժեքն է: Եթե կոնկրետ կիրառության մեջ նոր բառը հանդես է գալիս ոճական-արտահայտչական որոշակի արժեքով, նշանակում է միանգամայն արդարացիվում է դրա ստեղծումը՝ անկախ այն բանից, թե դա հետագայում

ընդհանրանալու միտումներ ցուցաբերում է, թե ոչ։ Նոր բառի ստեղծման ժամանակ գրողի նպատակը ոչ թե գրական լեզուն հարստացնելն է, այլ զգացմունքը, միտքը անհրաժեշտ նրբերանգներով, ոճական պատշաճ որակով արտահայտելը։ Այլ բան է, որ այդպիսի նորակերտ բառերը, համապատասխանելով մայրենի լեզվի բառակազմական օրինաչափություններին, օժտված լինելով որոշակի արտահայտչականությամբ, ինչպես նաև այլ հանգամանքների շնորհիվ կարող են ընդհանրանալ և նպաստել գրական լեզվի բառապաշարի հարստացմանը։

Անհատական նորաբանություններն ուսումնասիրողին հետաքրքրելու են ոչ միայն կազմությամբ, այլև իմաստի ու կիրառության տեսակետից։ Նոր բառի կազմության հարցում, հասկանալի է, գրողի ազատությունը բավական սահմանափակ է. որպես ընդհանուր օրինաչափություն, նա հարազատ է մնում մայրենի լեզվի բառակազմական օրինաչափություններին։ Նկատվող որոշ շեղումների հարցում ավելորդ խստապահանջությունը միշտ չէ, որ կարող է արդարացվել։ Այսպես, օրինակ՝ Նարեկացու ստեղծած նորաբանություններից են «բազմաբուրյան» և «հանրահռչակել» բառերը։ Բայց հայտնի է, որ մեր հին լեզվում գոյություն չի ունեցել ոչ «բուրյան» և ոչ էլ «հանրահռչակ» ձևը, այսինքն՝ բառակազմական իմաստով Նարեկացու ստեղծած «բազմաբուրյան», «հանրահռչակել» բառերը շեղումներ են։ Բայց, չնայած դրան, այդ բառերն աչքի են ընկել բավական ուժեղ արտահայտչականությամբ և կրկնակի ձևով են նպաստել մեր գրական լեզվի բառապաշարի հարստացմանը։

Բավական դժվար է որոշել, թե ո՞վ է այս կամ այն անհատական նորաբանության հեղինակը։ Հաճախ է պատահում, որ բավական վաղուց գոյություն ունեցող բառը վերագրվում է ավելի ուշ շրջանի գրողի։ Եվ այս անխուսափելի թյուրիմացությունը միշտ էլ հնարավոր է, քանի դեռ կազմված չեն գրողների ու բանաստեղծների անհատական բառարանները՝ կամ գոնե նրանց նորակերտ բառերի ցանկը։ Առանձին վերցրած մեկ-երկու հեղինակի կազմած նորաբանությունների նույնիսկ հանգամանալի ուսումնասիրությունը չի կարող վերացնել վերը նշված թյուրիմացության հնարավորությունը։ Այսպես, օրինակ՝ թվում է ամեն ինչ արված է, որ ճշտվի Վ. Տերյանի ստեղծած բառերի ցանկը։ Բայց, այնուամենայնիվ, նրան վերագրվող նորակերտ բառերի մեջ, թեև որոշ վերապահումով, նշվում է նաև «սորտմաշուք»-ը¹, որն ավելի վաղ օգտագործված ենք տեսնում Հովհ. Թումանյանի «Փարվանա» լեգենդում («Այժմ էնտեղ սորտմաշուք խոր փարվանա լիճն է ծփում»)։

Միանգամայն թերի, պակասավոր պետք է համարել որևէ գրողի նորաբանությունների ուսումնասիրությունը, եթե հեղինակի կողմից չի ներկայացվում նրա կերտած նոր բառերի հնարավորին չափ ամբողջական ու ճշտված ցանկը։

Անհատական նորաբանությունների ուսումնասիրությունը զգալի չափով կնպաստի նաև հեղինակային ճշգրտված տեքստերի ստեղծմանը, ինչպես նաև մայրենի լեզվի բառարաններում բառերի ընտրության ու բացատրության գործին։ Առանց որևէ վարանումի նշվում է, թե Վ. Տերյանն ստեղծել է «աղմկահեր» բառը («Դու այնտեղ էիր, այն աղմկահեր կյանքի մշուշում»)։

¹ Ռ. Իշխանյան, Վ. Տերյանի «Մթնշաղի անուրջները» լեզվական առումով (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 1, էջ 65)։

Կարգում ես ու ընկնում մտածմունքի մեջ, թե ինչ է նշանակում աղմկահեռ. «աղմուկ»-ն ու «հեր»-ը (վարս, մազ) ի՞նչ առնչություն ունեն իրար հետ կամ ի՞նչ է նշանակում «աղմկահեր կյանք»: «Աշնան մեղեդի» բանաստեղծության առաջին հրատարակության մեջ (1906 թ.) բառս օգտագործված է «աղմկաբեր» ձևով (Դու աչք տեղ հեռվում, այն աղմկաբեր կյանքի դաշտերում...)²: «Աղմկաբեր»-ն ավելի հնարավոր է թվում: Բայց քանի որ բանաստեղծության հետագա հրատարակությունների համար հիմք է հանդիսացել «Մթնշաղի անուրջների» (1908 թ.) տեքստը, ուստի գործածության մեջ է մնացել «աղմկահեր» մեծիկի ձևը, որը նույնիսկ տեղ է գտել «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» (1969 թ.): Հովհ. Շիրազի ստեղծագործություններում երկու տառնյակից ավելի կասկածելի և աղավաղված ձևեր չեն նկատվում: Եթե դրանք այսօր ուշադրության չարժանանան, չճշտվեն, հետագայում կարող են զանազան թյուրիմացությունների առիթ տալ: Դրանց քննությունը ստորև կանդրադառնանք:

Նորաբանությունների հետ կապված վիճահարույց հարցերից մեկն այն է, թե դրանք ինչ սկզբունքով կարող են տեղ գտնել գրական լեզվի բառարաններում: Այս խնդիրը մեր նպատակից դուրս է, իհարկե, և մեզ հետաքրքրում է այն շահով, թե ինչպես պետք է վարվել նորաբանությունների որոշման հարցում, երբ ուսումնասիրվող հեղինակի կազմած որոշ բառեր արդեն մոծված են մայրենի լեզվի բառարաններում: Հայտնի նկատառումով այստեղ մեզ առանձնապես հետաքրքրում են «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» և է. Բ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան», որոնք արդի հայերենի բառապաշարի, հատկապես նորաբանությունների ընդգրկման առումով բավական լիակատար են: Որպես այդպիսին, դրանք կողմնորոշիչ նշանակություն կարող են ունենալ սովետական շրջանի հայ գրողների նորակերտ բառերի ուսումնասիրության հարցում: Հեղինակային օրինակների առկայությունը լայն հնարավորություն է տալիս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանով» որոշել, թե նորակերտ բառի ամենահին գործածությունը ո՞ր գրողին է վերաբերում: Բայց նկատվում է, որ այդ բառարանում ոչ միայն բառացանկի ընտրության, այլև բառերի իմաստների բացատրման առումով երբեմն անհատական բարձրացվել է ընդհանուրի աստիճանի: Բավական է նշել, որ այս կամ այն գրողի միայն մեկ անգամ օգտագործած բառը հաճախ նույնիսկ առանց հազվադեպ (հզվդ) կամ բանաստեղծական (բնստ) նշանի մատուցվում է որպես «արդի հայերենի գրական լեզվի ընդհանուր գործածական» բառ: Ահա Շիրազի ստեղծագործությունից վերցված այդպիսի մի քանի բառ՝ հազարաբարդ, եղնկաոտ, գիշերասաթ, գիշերասուղ, ժայռաբարուր, ժպտանյութ («Ժպիտ» և «նյութ» բառերից), հովվանուշ («հովիվ» և «անուշ» բառերից) և այլն: Մեղ հետաքրքրող հարցի առումով խնդիրն ավելի է դժվարանում այդ բառարանի հեղինակների ցուցաբերած որոշ անհետևողականության պատճառով. եթե անհրաժեշտ է համարվել վերցնել «հազարաբարդ» բառը, ինչպես արդեն նշվել է վերևում, ապա անհասկանալի է մնում, թե ինչու է մերժվել Շիրազի նույն ստեղծագործության նույն տողում օգտագործված «հազարապարդ»-ը (ՔՀ, 2-րդ, 240): Կամ՝ այդ բառարանում տեղ են գտել հազարալեռ, հազարաճորտ, հազարա-

2 Վ ա հ ա ն Տ երյ ա ն, Նրկերի ժողովածու, հ. 1. Երևան, 1972, էջ 312:

տեղ բառերը՝ Շիրազից վերցված օրինակներով, բայց անտեսվել են դարձյալ նույն հեղինակի ստեղծագործություններում եղած հաղարախոհ, հազարահրաշ, հազարավեպ, հաղարավիշտ, հազարատարերք և այլ բառեր: Մի՞թե այս ամենը նկատի ունենալով կարող ենք ենթադրել, թե բառարանում տեղ չգտած այդ բառերը (հազարապարզ, հաղարախոհ և այլն) անհատական նորաբանություններ են, իսկ մյուսները (հազարաբարդ, հազարալեռ և այլն) աղբյուրից չեն: Նման կողմնորոշումը, իհարկե, մոլորեցուցիչ կլինի:

Շիրազի նորաբանությունների որոշման հարցում մենք ցուցաբերել ենք հետևյալ մոտեցումը. բացի այն բառերից, որոնք չկան ո՛չ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» և ո՛չ էլ ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարաններում, ինչպես նաև չենք պատահել որևէ գրողի ստեղծագործությունում, շիրազյան նորաբանություններ ենք համարել նաև նրանք, որոնք Ստ. Մալխասյանցի բառարանում չկան և ակադեմիայի հրատարակած բառարանում միայն Հովհ. Շիրազից վերցրած օրինակով են ներկայացված, ինչպես, օրինակ՝ ահաշուք, աղվեսախոս, աստեղնահաս, արեգակնաբիթ, բյուրաթև, խենթուրախ, հուջաշխարհ, մահակնճիռ և այլն: Որոշ վերապահությամբ այստեղ ենք դասում Շիրազի ստեղծագործություններում օգտագործված նաև այն բառերը, որոնք դարձյալ միայն ժամանակակից հայոց լեզվի բառարաններում կան: Այսպես, օրինակ՝ այդ բառարաններում առանց որևէ օրինակի նշված են այնպիսի բառեր, որոնք, կարծում ենք, առաջին անգամ Շիրազի ստեղծագործություններում ենք հանդիպում՝ աղավներամ (ՔՀ, 2-րդ, 238), գառնանալ (ՔՀ, 3-րդ, 56), դառնասպառի (Հատ., 365), ինքնահունվել (ՔՀ, 2-րդ, 226), խառնակերտ (ՔՀ, 3-րդ, 367, 241), մարմնահալ (ՔՀ, 2-րդ, 222), մարմնաճոխ (ն. տ., 267), մաքրախիղճ (ն. տ., 216), մեծամուռն (ն. տ., 209) և այլն:

Շիրազյան նորակերտությունները, լինելով մայրենի լեզվի բառակազմական օրինաչափությունների ճանաչման լավագույն արտահայտություն, հանդես են գալիս որպես բանաստեղծի ապրումները, խոհերն ու մտածումները անհրաժեշտ նրբերանգներով ու խորությամբ արտահայտելու, իրականությունը բանաստեղծական թարմ ու պատկերավոր ընկալմամբ վերստեղծելու կարևոր միջոց:

Գեղարվեստական խոսքը սոսկ հաղորդակցման միջոց չէ, այլ նաև գեղարվեստական երևույթ: Այս վերջին հանգամանքն իր արտահայտությունը պիտի գտնի ոչ միայն խոսքի ընդհանուր կառուցվածքում, այլև նույնիսկ առանձին բառերի օգտագործման հարցում— այս է մեղ հուշում Հովհ. Շիրազի բառօգտագործման վարպետությունը: Այնպես որ, շիրազյան հարուստ նորակերտ բառերը մեծ մասամբ ոչ այնքան մայրենի լեզվի բառապաշարի պակասի արտահայտություն են, որքան իրականությունը բանաստեղծական թարմությամբ վերարտադրելու, զգացմունքների ու մտքերի հեղեղը հունի մեջ դնելու, անհատական մտածողության ինքնատիպությունը կաղապարելու, համակրության և հակակրության ոլորտի հասկացությունները կիզակետի բերելու լավագույն միջոցներ: «Խորամանկ» հասկացությունն արտահայտելու համար մեր լեզվում բազմաթիվ բառեր կան, բայց Շիրազը մի նոր բառ է ստեղծել՝ ցանկանալով ուժեղացնել բանաստեղծական խոսքի հուզական բովանդակությունը, թարմությունը. «... Լռեց վեղարն աղվեսախոս, և ծառս եղավ թագուհին» (Հատ., 360): Նոր, բաղձալի իրականությունը բանաստեղծ-

ծական ըմբռնումով Շիրազի ստեղծագործության մեջ հաճախ խորհրդանշվում է «զարուն» հասկացությամբ: Ահա նրա ստեղծագործություններից մեկում այդ հասկացությունը որակվում է «վարդահանդես» նորակազմ մակդիրով.

— Մլեք, հլեք, կանչում եմ ես, թող բողբոջեն հրկրիս վրա
Գարունները վառդաճանդես, թող արևը կուրծքը բանա... (ԵՀ, 52):

Կազմությամբ միանգամայն հարազատ այս բառով խտացվել է բանաստեղծական հասկացությունը, ընդգծվել խոսքի վառ պատկերավորությունը:

Հովհ. Շիրազի ստեղծած նոր բառերի իմաստային յուրահատկության մասին խոսելիս պետք է ընդգծել, որ դրանք հատկանշվում են տարողունակությամբ, բովանդակության հագեցվածությամբ: Դրանց մեծ մասը հաճախ օժտված է լինում մի քանի բառանոց նկարագրության արժեքով՝ կարևոր դեր ունենալով բանաստեղծական խոսքի սեղմությունն ապահովելու գործում.

Երևանի ջուրը,— կենսաբեր գանձ...
Ջինջ է, սառն ու մաքուր, ինչպես Ալագյազի
Գազաթների պսակ ձյունը երկնաճամբույր... (ԵՀ, 98):

Այս բառը ոչ միայն ընդգծված բանաստեղծական շնչով բնութագրում է ձյուն առարկան, այլև անդրադարձնում ակնարկում է Արագածի գազաթների բարձրության, երկնամերձության մասին: Ահա, օրինակ, ինչպիսի խտացումով են արտահայտվում բանաստեղծի անհանգիստ տարերքը, նրա հոգու մեծաթուիչ ելևէջումները այս նորակերտ բառով.

Մովի հանդեպ ծով եմ ելման,
Մակընթացող-տեղատվող... (ՔՀ, 2-րդ, 102):

Քառյակներից մեկում օգտագործված է շատ սովորական թվացող «աստղալուռ» նորակազմ բառը.

Իրավ, խենթ է իմ քնարը, որ չի բախում այլ մի դուռ;
Բացի հայոց բախտի դռնից, Մասսի դռնից աստղալուռ....
(ՔՀ, 2-րդ, 130):

Բախվող դուռ, որ... աստղային լուծյուն ունի՝ սառն ու անարձագանք, հեռու-հեռավոր...

Հովհ. Շիրազը նոր բառեր է ստեղծել իր գործունեության բոլոր շրջաններում և բոլոր տեսակի ստեղծագործություններում (բանաստեղծություն, պոեմ, քառյակ, ժողովրդական նյութերի մշակում և այլն): Շիրազի լեզվամշակման գործունեությունը մեկ անգամ ևս վկայում է, որ խոսքի ժողովրդայնությունը շատ ավելի բարդ ու բարձր հասկացություն է, և միանգամայն սխալ կլինի, եթե դա նույնացվի ժողովրդական-բարբառային բառերի ու ձևերի օգտագործման հետ: Ոգով ժողովրդային շիրազյան խոսքում ժողովրդայնության ապահովման գործում կարևոր դեր ունի նաև գրական,

մշակված բառաշերտը, որի մի մասն են կազմում նորաբանությունները, իր դրական գործունեության հենց սկզբնական շրջանից էլ հետևելով գեղարվեստական խոսքի մշակման ժողովրդային-թուամայանական ուղղությանը՝ Հովհ. Շիրազը միաժամանակ ուշադրության կենտրոնում է պահել նաև իր նախորդների ու ժամանակակիցների (Տերյան, Չարենց և այլն) լեզվամշակման վարպետության հարուստ փորձը: Նրա 30-ական թվականների ստեղծագործություններում հաճախ կարելի է հանդիպել իր նախորդների կողմից ստեղծած նոր բառերի գործածության: Այդպիսի բառերից են՝ լուսակարկա, («Այդու գարուն լուսակարկաչ, պստիկ դուստր ժամանակի...», ԵՂ, 70: Համեմատիր՝ Դ. Վարուժանի. «Կույս գարնան լուսակարկաչ աղբյուրներ...»), լուսաւայլայլ («Բոլոր ճախրուն ու թեւովոր լուսաղայլայլ երգիչներ՝ Քնար առեք, թռեք ինձ մոտ՝ խմբով երգենք փառք մեր», ԵՂ, 140: Հմմտ.՝ «Լուսաղայլայլ մեղեդի» (Դ. Վարուժան), քաղցրավաչ («Դու մեկն էիր հազարի մեջ, վրացուհի իմ քաղցրավաչ», ԵՂ, 158: Հիշենք Թումանյանից՝ «...քաղցրավաչ մեղեդու ձայնով Դերեդն է խոսում...»), որոտածայն («Բայց տարիք են գալիս գնում որոտածայն...», ԵՂ, 197), թավշագեղ («Հագել է անտառը թավշագեղ կանաչ», ն. տ., 181) և այլն:

Դուցե այս և նման բառերի մի մասը ինքը Շիրազն է ստեղծել՝ անկախ իր նախորդներից: Բայց փաստն այն է, որ դրանցով կրկնվում է եղածը, ինչպես որ Շիրազի սկզբնական շրջանի ստեղծագործություններում դեռևս նկատվում են նաև հենց իր կողմից ստեղծված որոշ բառերի հաճախակի օգտագործման դեպքեր, օրինակ՝ «Մեղրն են ծորում Հայրո-աղի այգիներում թավշագեղ» (ԱԵ, 28): «Ասաց ծերունին ու միասին իջան ձորը թավշագեղ» (ն. տ., 143): Կամ՝ «Երբ ծիրանի Հագան սարերն Ո՛ր անտառը թավշագեղ...» (ն. տ., 144):

Նորակերտ բառերն աննախադեպ առատությամբ և մեծ վարպետությամբ են օգտագործված Շիրազի հետագա շրջանի ստեղծագործություններում, հատկապես «Քնար Հայաստանի» ժողովածուում: Այստեղ գրեթե ցանկացած էջում ընթերցողը հանդիպում է ճաշակով ստեղծված և տեղին օգտագործված նորակերտ բառերի: Եվ որ կարևոր է, դրանք հանդես են գալիս ոչ թե երկրորդական նշանակությամբ, որպես բանաստեղծական խոսքի զարդարանքներ, այլ անփոխարինելի դեր ունեն ստեղծագործության բովանդակության արժարժման, գեղարվեստական խնդիրների լուծման գործում: Այդ առումով ուշագրավ են մասնավորապես «Հայոց հրաշքը», «Ինքներգանք» (հետագայում՝ «Ինքներգանք՝ համամարդկային» խորագրով) և «Բնության գլուխգործոցը» պոեմներն ու մի քանի քառյակներ: «Ինքներգանք» փոքրածավալ պոեմում նորաբանությունների շքեղ հանդես է՝ սկսած հենց խորագրից: Դրանք առանձնակի կարևորություն ունեն պոեմի քնարական հերոսի էությունն ամբողջացնող հակադիր հասկացությունների արտահայտման գործում՝ հատկանշվելով իրենց և՛ հստակ ուղղակի, և՛ խորամիտ փոխաբերական իմաստներով:

Մերթ դրախտ ես աստվածամուտ, մերթ վրնջուն մի գոմ,
 Մերթ արձան ես, մերթ ռոմեոսի, մերթ արև ես, մերթ մոմ,
 Մերթ մարդը քեզ աստվածակերտ տիեզերք է մի բուռ,
 Մերթ կթվա սատանակերտ լաբիրինթոս մի լուռ... (ԲՀ, 2-րդ, 242):

Մերթ մաեկուղեղ, ինչպես Ադամն օձ կնոջից խաբված,
Մերթ բազմասիրտ քո ուղեղով աստծու հետ ես կապված...
(ն. տ., 243):

Այս պոեմում արտահայտչական նույնպիսի արժեքով են հանդես գալիս նաև հետևյալ բառերը՝ սիրաշունչ, մթնաբավիղ, խավարաբուխ, ոգեխուլզ, մահաբառաչ, մշտաբողոք, տխրուրախ, ազգախորհուրդ, աստվածախոր, մթնածով, հուսախեղդ, աստվածաթոր, բազմաշաղախ, մշտամուռ, տիեզերատիսյ և այլն:

Անմահ Մաշտոցին նվիրված «Հայոց հրաշքը» պոեմում էլ նորակերտություններին է բաժին ընկել ստեղծագործության հիմնական գաղափարը խտացնելու, հենակետային հասկացությունները գեղարվեստորեն մարմնավորելու կարևոր դերը:

Օ՛, հավատի կաթին անդամ ծով կծնե, ով ազգավաչ,
Երեսունվեց որդի ծնեց կույս արգանդը քո սրտի մեծ՝
Կույս երկունքով քո հանճարի անմահության կնիք դրեց
Մահակնճիռ ճակտին հայոց, հեգ ճակատին մեր սեգ ազգի,
Մաճաթնջուկ մղձավանջից դուրս բերելով առանց բազկի...
(ՔՀ, 2-րդ, 223):

Իր արտահայտչականությամբ և հայ ժողովրդի պատմական ճակատագրի ընդհանրացման կարողությամբ վերջին բառը («մահաթնջուկ») հիշեցնում է Ավ. Իսահակյանի «մահախուճապ»-ը («Մահախուճապ սերունդների աչքն է դիպել լույս գազաթին ու անցել»): Այդ պոեմի բացառիկ հաջողված նորակերտություններից են նաև հետևյալ բառերը՝ հուսամբմունջ, սրտաշունթ («սրտում էիր աստծու հետ հուսամբմունջ ու սրտաշունթ...»), այբբենաթուր («Ով ուսուցիչ, ով ազգապահ, ով զորավար Այբբենաթուր»), երախտանուշ («Երախտահուշ փառք փառարժան Վռամշապուհ հայ արքային...»), աթուրանայ («որը իմաստային ու հնչյունական կապի մեջ է գտնվում զուրանանայ, հունանայ, անտունանայ բառերի հետ՝ «Ու ելք էիր փնտրում, անքուն, ով դու միակ արթունահայ»), լեզվազորք («Դուրս վանվեցին ասորական լեզվազորքերն Հայաստանից...») և այլն:

Մեր բանաստեղծի նորակազմ բառերի մեջ որոշակիորեն առկա են գեղարվեստական ստեղծագործության յուրահատկությունները՝ դրանք ընդգծված ձևով ուղղակի գեղարվեստական տարրեր են: Հասկացությունների հետևողականորեն փոխաբերական իմաստավորումը, տպավորիչ չափազանցումները, մտածողության ընդգծված պատկերավորությունը, որ այնքան բնորոշ են շիրազյան խոսքին, ցայտուն արտահայտված են նաև նրա նորակազմություններում: «Եվ այն օրից սար ու ձորից ամպերն ինձ են գալիս դեռ՝ Երազներով այն խիտ ու զով անտառները թավջանդ» (ԵՀ, 94): «Ով մարդ, այժմ ոտքիդ տակ է երկինքն աստեղնազորգ» (ՔՀ, 3-րդ, 366): «Երկնակառնարն էլ հոնքն է՝ վեր քաշած՝ Հավիտյան ապշած մայր տիեզերքի Արեգակնաբիբ կապուտակ աչքի...» (ՔՀ, 1-ին, 460): «Դաշտի վրա խաղում էր դեռ Մթնշաղը փափկաթև...» (ԱՆ, 81): «Ու սիրտն է մաշում դռնեդռն՝ Հորս սրտի պես»:

հազարամյակ» (ՔՀ, 1-ին, 258) և այլն: Սրանց հետ կատարյալ ներդաշնակություն են ստեղծում այսպես կոչված բանաստեղծական բառերը, որոնք սովոր շերտ են կազմում Շիրազի ստեղծագործություններում: Օրինակ՝ «վարդաբողբոջ կարոտ» (ԱՆ, 75), «կապտաշուշան երկինք» (ն. տ., 102), «վարդանուր սիրտ» (ՔՀ, 2-րդ, 80), «երկնաեղնիկ լուսին» (ն. տ., 236), «գիշերասաք վարսեր» (Հատ., 332), «խաղաղաշուրք բաժակ» (ՔՀ, 2-րդ, 19), «կանաչեհազ ափ» (ՔՀ, 1-ին, 348), «հրահամբույր ցնորքներ» (ՔՀ, 2-րդ, 232), «մեղրառղկույզ ստինքներ» (ՔՀ, 1-ին, 452), «ոսկեմշուշ երազանք» (ն. տ., 261), «ոսկեմթար ճշմարտություն» (ՔՀ, 2-րդ, 319), «սիրահուր լավա» (ՔՀ, 3-րդ, 39), «սիրամիմունջ սիրտ» (ՔՀ, 2-րդ, 146), «թախճաշունկ» (ԵՀ, 242) և այլն:

Անհատական դրոշմով են աչքի ընկնում հատկապես այն բառերը, որոնց բաղադրիչները հակառակ նշանակություն ունեն: Սրանք երևույթն իր հակադիր հատկություններով բազմակողմանիորեն ներկայացնելու լավագույն արտահայտամիջոցներ են՝ մեծապես նպաստելով խոսքի սեղմությանը և ընթերցողի ընկալման ակտիվությանը. «Ով հանճարեղ իմ վայրկյաններ, այցելեցեք ինձ հաճախ, Որ գեղգեղա վանդակում էլ իմ սոխակը տխրուրախ» (ՔՀ, 2-րդ, 141): «Մերթ Տղմուտն ես մեր տխրուրախ, մերթ Հրադաճ հրուտ» (ն. տ., 236): «Բայց գուսանին մահ էլ թե տա՝ նորից սիրած յարն է գովում, Ախ, դառնանու իր կույր սիրո շճաշակած բարն է գովում...» (ն. տ., 181): «Մերթ փարախ ես դու վշտախիճ որք դառների, սիրո...» (ն. տ., 237): «Ի՞նչ... սերս տեսնեմ թշնամուս գրկո՞ւմ, Դեռ իր լրբանու ծիծաղը լսեմ...» (ՔՀ, 3-րդ, 46) և այլն:

Բանաստեղծն այնքան հմուտ է նոր բառեր ստեղծելու արվեստում, որ անհրաժեշտ դեպքում գերազանցապես հենց դրանց վրա է խարսխում իր խոսքի արտահայտչականությունը: Առավել ուշագրավն այն է, որ նման դեպքում հաճախ հանդես են բերվում նույն արմատով կազմված բառերը. կրկնակի դժվարացնելով գործը՝ բանաստեղծը, սակայն, լավագույն ձևով է ապահովում խոսքի հմայիչ արտահայտչականությունը՝ մասնավորապես ստեղծելով բանաստեղծական խոսքին առանձին հմայք հաղորդող առձայնություններ և բաղաձայնություններ:

Կրճքիս սալին սեր է կոփում սեր սիրամուր իմ սիրտը,
Սիրաշշունջ, սիրամիմունջ, սիրատրտունջ իմ սիրտը,
Սեր-սիրաշունջ, սեր-սիրափունջ, սիրամուունջ սիրտս սեր,
Հաղար սյուտի սիրաբաժին սիրակամուրջ իմ սիրտը:

(ՔՀ, 2-րդ, 146):

Բառօգտագործման ոճական նույն եղանակն ավելի կատարյալ դրսևորումով նկատվում է նաև մեկ այլ ստեղծագործության մեջ, որտեղ կրկնվող արմատներով կազմված բարդ բառերը դարձյալ հանդես են գալիս որպես բանաստեղծական մտքի ծանրության կրողներ: Այդ ստեղծագործության հիմնական մոտիվը կարոտի գաղափարն է, որը բազմակողմանիորեն բնութագրվում է նույնաբանա նորակազմ բառերով:

Կարդացի քո գիրը՝ ոգիդ գրկեցի,—
 Բյուրացյա կարոտս աչքերիդ կարոտ,
 Քո ոգին գրկելով՝ քեզ կարոտեցի,—
 Բյուրացան կարոտս ճամփեքիդ կարոտ: (ՔՀ, 2-րդ, 155):

Այդ նույն «բյուր» բառով կազմված է նաև «բյուրաշուրթ» բարդությունը՝ «Բյուրաշուրթ կարոտս շուրթերիդ կարոտ»: Սա «կարոտ» բառի հետ որպես որոշիչ հանդես եկող նույնարմատ նորակազմ բառերի մի խումբն է: Մյուս խմբում կրկնվող բառը «սերն» է.

Սիրաբա գերվիշ եմ՝ վերքով անբալզամ,
 Սիրածեն կարոտս մազերիդ կարոտ,—
 Գազազած կարոտից դարձել եմ թառզան,
 Սիրամեն կարոտս նազերիդ կարոտ:

Այդպես էլ՝ սիրավոր («Սիրավոր կարոտս շամամիդ կարոտ»), սիրաբերդ («Սիրաբերդ կարոտս զորքերիդ կարոտ») և այլն: Հարկ է նկատել, որ այս նորաբանությունները ոչ թե այնպես ինքնին, մեկուսացված ձևով են հանդես գալիս. այլ, որպես ընդհանուր օրինաչափություն, իմաստային սերտ առնչությունների մեջ են գտնվում նույն տողում հենակետային նշանակություն ունեցող բառերի հետ, պայմանավորված են դրանցով, մի հանգամանք, որ չարձյալ կրկնակի դժվարացնելով բառի հմուտ, տեղին օգտագործումը՝ առավել համոզիչ է դարձնում բանաստեղծի բառօգտագործման մեծ վարպետությունը: Ահա՛ եթե կարոտը սիրո բերդ է («Սիրաբերդ կարոտ»), ապա սիրուհու զորքերին է տեղում («Սիրաբերդ կարոտս զորքերիդ կարոտ»), եթե կարոտը բյուր ջանքերով է, ապա սիրուհու ճամփեքին է կարոտ, որ լուսավորի («Բյուրացան կարոտս ճամփեքիդ կարոտ») և այլն:

Շիրազյան նորաբանությունները գերազանցապես որպես բարդ բառեր են հանդես գալիս, սակավաթիվ են ածանցումով կազմված նոր բառերը: Վերջիններիս մեջ առանձնապես աչքի են ընկնում աճ ժխտական ածանցով կազմվածները՝ անբալզամ (ՔՀ, 2-րդ, 155), անդմրուխտ (ն. տ., 196), անմարդապաշտ (ՔՀ, 3-րդ, 179), անորս (ԾԳ, 73), անշողափ (ՀՄ, 138), անշնին (ՔՀ, 2-րդ, 242), անցոփածունդ (ՔՀ, 3-րդ, 142), անփլեղի (ն. տ., 278) և այլն: Գրեթե մեկական բառ է կազմված արեւ, յալ, ուն, ունի, ենի, ական ածանցներով՝ աստվածորեն (ՔՀ, 3-րդ, 194), ոհմակյալ (ՔՀ, 2-րդ, 277), պապանձուն (ն. տ., 248), քրոջական (Հատ.—49, 23), վագրենի (ՔՀ, 1-ին, 247), սավառուն (ՔՀ, 3-րդ, 178), սատանուհի (ՀՄ, 82): Ունի ածանցով մի բառ էլ կա «Բնության գլուխգործոցը» պոեմում՝ «Մարդն իր մեջ ղդաց շունչն արարողի, Բնության բույրը, ոգին... աստծու, Որով վայրենուճին դարձավ մարդացու...» (ՔՀ, 2-րդ, 251): Բայց նկատի ունենալով խոսքի ընդհանուր բովանդակությունը, ինչպես նաև վանկերի քանակը, ենթադրում ենք, որ «վայրենուհի» բառն այստեղ տպագրական վրիպակ է, դրա փոխարեն, հավանաբար, պիտի լինի՝ «վայրենի»: Եւ ածանցով կազմված են «գոյեղ» և «հոյեղ» բառերը («Մերթ ավերակ Անին ես դու, մերթ Երեանն ճոյեղ, Մերթ Սահարա անապատն ես, մերթ Մասիսն ես զոյեղ», ՔՀ, 3-րդ, 360):

Մոռութ, մանկութ բառերի նմանությունը է կազմված ջահելութ (ս'իրտս հանգավ ջահելութ...», ԵԶ, 176), իսկ ներքուստ, արտաքուստ բառերի նմանությունը՝ վարուստ բառը (ս'երթ վերուստ ես ու մերթ վարուստ, մերթ փոքրիկ ես, մերթ մեծ...» (ՔԶ, 2-րդ, 241)։ Շիրաղն առանձին նախասիրություն ունի իկ ածանցի օգտագործման հարցում. «...Ինչպես պղծեց ենիչարը Հայաստանս խաղաղիկ, Մեր խաղաղիկ աշխարհիկը դարձրեց արյան ճապաղիկ» (ն. տ., 211)։ Ինչպես նաև՝ «...Մեկն ճիացիկ շշնջաց...» (ԳԽՍ, 135)։ «Ախ, չէ, մայրս մի հասարակ Աստվածիկ է, մի հույս ճրագ» (ՀՄ, 8)։

Շիրագի ստեղծագործություններում առանձնապես շատ չեն նաև հարադրություններ կազմված նորաբանությունները։ Թեև բանաստեղծը հաճախ բառերի բավական ազատ կապակցություններ գծիկով է դրում և դրանք իմաստային որոշ սերտություն ունեն, բայց այդպիսիք, որպես բառական արժեք չունեցող միավորներ, բարդ բառերի կազմի մեջ չենք վերցնում։ Ինչպես, օրինակ՝ «Սեր-ճնճանում թեկուզ սրտից ճուռն էլ քամես՝ Միայն թե դու, միայն թե դու չթառամես» (ՔԶ, 1-ին, 31)։ «Գերված նրանց սեր-խաղերին...» (ն. տ., 252)։ «Հառաչող կարոտս քուն-քարձիղ կարոտ» (ՔԶ, 2-րդ, 155)։ «Անզմրուխտ մատանուս ակ-զմբուխտ արի» (ն. տ., 156) և այլն։

Շիրագի կազմած բարդ բառերը, որոնք ճնշող մեծամասնությամբ իսկական բարդություններ են, հատկանշվում են ծավալի սեղմությամբ. դրանք հիմնականում կազմված են երկու փոքրածավալ բաղադրիչներից։ Հատուկ են եռարմատ բարդությունները, ինչպես, օրինակ՝ բազմածաղկաձև (ՔԶ, 3-րդ, 144), բյուրաստվածաձայն (ն. տ., 236), դառնավշտահեղծ (ն. տ., 139), մարդամարմնաձև (ն. տ., 141), մարմնափրփրադեզ (ՔԶ, 2-րդ, 267)։ Սակավ են նաև բարդ ածանցավոր բառերը (ազգատենչիկ, անտունահայ, քարայրամարդուկ)։ Ուշագրավ կազմություն է «սիրանմեռ» բառը, որի երկրորդ բաղադրիչը նախածանց ունի («Սիրանմեռ կարոտս նազերիդ կարոտ», ՔԶ, 2-րդ, 195)։

Շիրագը բարդություններ է կազմում նորանոր բառերով, ընդամենը միայն հինգ-վեց բառ է, որ մի շարք բարդություններում տասը և ավելի անգամ են հանդես գալիս։ Դրանք են՝ միշտ, սեր, հազար, աստղ, մարմին։ Ընդ որում սրանք բոլորն էլ որպես բարդության առաջին բաղադրիչ են օգտագործվել. «սեր»-ը ավելի քան երեսուն անգամ (սիրաբերդ, սիրաբույժ, սիրահուր, սիրամոռնչ, սիրայծյամ և այլն), «միշտ»-ը՝ շուրջ քառասուն անգամ (մշտանեղջյուր, մշտաալիք, մշտամանուշակ, մշտամաշտոց, մշտաճիչ, մշտասուրբ և այլն), «աստղ» բառը՝ շուրջ քսան անգամ (աստղաբողբոջ, աստղաթափուր, աստղաճամփա, աստղաշար, աստղասանդուղք, մարմնաբիրտ, մարմնամագնիս, մարմնամեղավոր, մարմնաշատ, մարմնապար, հազարաճորտ, հազարաստինք, հազարավիշտ և այլն)։

Շիրագյան նորակերտությունների մեջ պատկանելի տեղ են զբաղեցնում բայերը, որոնց թիվն հասնում է շուրջ յոթ տասնյակի։ Գրողը բայեր է կազմում գոյականներից ու ածականներից, պարզ ու ածանցավոր բառերից, հասարակ և նույնիսկ հատուկ անուններից։ Օրինակ՝ ամբոսսել, անապատվել, անառակվել, անհագուրդել, ավարայրվել, գմբեթվել, եղեռնել, կաթնավետել, հայաբերդվել, հրաբուխվել, համասփուել, մագաղաթվել, մանուշակվել, մասիսվել, նարեկվել, պատրույգվել, տիեզերանալ և այլն։ Սրանց փոխարեն

մեր լեզվում սովորաբար օգտագործվում է գոյականը կամ ածականը, «դառնալ» վերացական բայի հետ (ասենք՝ անապատվել = անապատ դառնալ, անառակվել = անառակ դառնալ և այլն), բայց, ի տարբերություն սրանց, նորակերտ բայերը հասկացությունն ավելի բանաստեղծորեն ու սեղմ ձևով են արտահայտում՝ զգալիորեն նպաստելով նաև խոսքի թարմությանը. «...Ու վագրացավ վշտից մի պահ վարդ հոգիս» (ՔՀ, 2-րդ, 32); «Մի՞թե քիչ էին իմ էլ աչքերը, Որ կանապառվես դու էլ. իմ Սեան...» (ՀՄ, 26); «...Եվ մեզ Լոնոնեց յաթաղանը սե,— խլից մեր հողն էլ աստվածապարզե» (ՔՀ, 3-րդ, 122);

Խոնչ դիտողություն կարելի է անել մեծ բանաստեղծի ստեղծած նոր բառերի վերաբերյալ:

Ուղղակի անհնար է, որ այդքան առատ նորաբանությունների մեջ չլինեին նաև անհաջողները: Եվ իսկապես, նրա որոշ ստեղծագործություններում պատահում են այնպիսի բառեր, որոնք ուղղակի ավելորդություններ են: Բերենք այդպիսի մի երկու օրինակ՝ «Ես ձյունավայրի լեռներից կգամ...» (ԳՆՍ, 18); «Ինձ ափ հանեց դողդոջ մի ձեռ, ա՛խ, ձյունոտակ ճերմակ մի մաղ...» (Ն. տ., 20); «Ու փերթ առ փերթ քնքշանում էր մուրճի տակ Բիրտ ու կնճոռտ խովապառկերը ժայռի...» (Ն. տ., 131) և այլն:

Պատահում են նաև այնպիսի բարդ բառեր, որոնց իմաստը բավական մոթ է, ուղղակի անմատչելի: Այդպիսի բառերի մի մասը, ամենայն հավանականությամբ, տպագրական աղավաղման հետևանք է: Օրինակ՝ «...Ջգաց, որ ոգու լույսն էլ գողացվեց, ներարկվեց մարդուն ձեռքով աստղային, Պրոմեթևսի լուսափյուռ ձեռքով...» (ՔՀ, 2-րդ, 286); «...Մարմնասով տեսնես, բայց ոչ ռգերով, ով իմ անհագուրդ» (ՔՀ, 3-րդ, 138); «Մարդացավի դեռ մոթ, վեհերոտ աչքին, Քաջք էր ծովն հսկա՝ միշտ բաց աչքերով...» (ՔՀ, 2-րդ, 275); «Մերթ գաղտնասեր մանուշակ ես՝ իր անշշուկ-կրքով, Մերթ սիրացույց աղավներամ՝ որ տաբախում ես երգով...» (Ն. տ., 238); «Մերթ մանրէ ես ամենաեղիկ, մերթ տիեզերքն ես խոր...» (ՔՀ, 3-րդ, 367); «Յուրաքանչյուր գիշեր մահից մի խոսի, Ո՛ր ես հանգչում, ցնորքներից անշեջ հուր, Նորափետուր տաբախանքներս ինձ հետ տուր...» (Ն. տ., 47); «Այնպես աննինջ երկնում էիր՝ կրկնում էիր դու ակնապիշ Աղոթքներդ երկնամատույց Սուրբ ճգնությամբ աստեղծացունց...» (ՔՀ, 2-րդ, 223); «Ով դու ննջյալ Օշականի, Դու հավիտյան մեր արթնություն, Ով ակամիտ, ով մշտարթուն, իրավն ասա, ով իմաստուն, Աստված էիր... Թե այն գիշեր երկվորյակվեց մարդն աստծուն...» (Ն. տ., 223); «—Մի՞թե ճորտն է... բայց սասանեց ահից կասկածն ամենքի, Երբ չար կիտեց ամպն հոնքերի խոստովանայրն ահարկու...» (ԳՆՍ, 111); իսկ երկրորդ հրատարակության մեջ՝ խոստովանայր (Հատ., էջ 359); «Այս ում ձեռքով է աշխարհն աղաղված, Որ լույսն ու մութը իրար են շաղված...» (ՔՀ, 2-րդ, 244); «...Ինչպես ծովում ման գաս, հանես մարգարիտներն հրաշաբեր, Որ դեռ անհայտ հայ մարգարիտ ազգդ գրով վեր հայտնվեր, Որ աշխարհին իր խոսքն ասեր հավերժությամբ իր սավառուն» (Ն. տ., 223) և այլն:

Բոլոր ընդգծվածները նորակերտ բառի տեսք ունեն, բայց, ինչպես զրույցի ժամանակ հաստատեց Շիրազը, դրանք աղավաղված ձևեր են և տպագրության ժամանակ առաջացել են հետևյալ բառերի աղավաղումից՝

լուսասփյուռ³, ողեսով, տարփում ես, ամենահղկ, տարփանքներ, աստեղացունց, ակումիտ, խոստովանահայր, մարդացու (մարդացվի); արարված, սավառուն:

Նկատելի են դեպքեր, որ նույն ստեղծագործության տարբեր հրատարակություններում բառը տարբեր գրություններ է հանդես բերվել: «Ինքներգանք» պոեմի առաջին հրատարակության մեջ կան «հաղարախոհ» և «անտառվել» բառերը՝ «Երազում ես մերթ մոռացվել, մերթ ուզում ես լցվել Հազարախոհ անտառվելով՝ աշխարհով մեկ բացվել...» (ՔՀ, 2-րդ, 243): Իսկ հաջորդ հրատարակության մեջ ընդգծվածների փոխարեն օգտագործված է «հազարախոհն անտառվելով» կապակցությունը (ՔՀ, 3-րդ, 367): Եթե սրանք տպագրական աղավաղումներ չեն, ապա բավական անհաջող կազմություններ են և անհասկանալի են դարձնում նախադասության բովանդակությունը: Նույնը պետք է ասել նաև «վերնաբերան», «ավերաբու», «սիրամուր» բառերի մասին՝ «Այսպես մտքի մեջ իմաստնաբանեց,— Ու բուսոց արքա այն լուսածաղկի լեզուն էլ հանեց... Հանեց ու դրեց վերնաբերանն հեղ մի մարդուկի...» (ՔՀ, 3-րդ, 141): «Ավերաբու լենկթեմուրի մրջյունի պես համառ Հայր հազար մահից ելնում, կյանքն է կերտում իր վառ» (ՔՀ, 2-րդ, 334): «Կրծքիս սալին սեր է կոփում սեր սիրամուր իմ սիրտը» (ն. տ., 146) և այլն: Բայց այսպիսի հատուկներ անհաջող բառերն ինչ են այն հարյուրավորների համեմատության, որոնք զգալիորեն նպաստում են ժամանակակից հայ գեղարվեստական լեզվի բառապաշարի հարստացմանը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ան—«Արևի երկիր» (պոեմ), 1938:

ԳևՍ—«Գիրք խաղաղության և սիրտ», 1950:

ԵԳ—«Երգերի գիրք», 1942:

ԵՀ—«Երգ Հայաստանի», 1940:

Հատ.—«Հատընտիր», 1954:

Հատ.— 49—«Հատընտիր», 1949:

ՀՄ.—«Հուշարձան մայրիկիս», 1971:

ՔՀ—«Քնար Հայաստանի» (Գիրք 1-ին, 2-րդ, 3-րդ):

Ն. տ.—նույն տեղում:

ОБОГАЩЕНИЕ ЛЕКСИКИ ХУДОЖЕСТВЕННОЙ РЕЧИ В ПРОИЗВЕДЕНИЯХ ОВ. ШИРАЗА

СЕНЕКЕРИМ МЕЛКОНЯН

Резюме

В армянской художественной литературе исключительна роль великого поэта Ованеса Шираза в деле создания неологизмов. По нашим подсчетам в его произведениях насчитывается более чем 750 слов-неологизмов.

Неологизмы Шираза говорят о его глубоком понимании и блестящем использовании словообразовательных возможностей родного языка и являются плодотворным средством выражения свежести образов, богатых и тонких оттенков чувств и мыслей поэта.

³ Մինչդեռ Վ. Ալեքսանյանը «լուսասփյուռ» ձևը համարում է նորակազմ բառ (ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ. 1965, № 2, էջ 28—29):